ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» ----------2025թ. № ---------- -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ Հ. 15 ՇԵՆՔԻ Հ. 35/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի վերաբերյալ» հ. 259-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի փողոց հ. 15 շենքի հ.35/1 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) Անի Սամվելի Բազինյանին և Աննա Աթաբեկի Հարությունյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ Հ. 15 ՇԵՆՔԻ Հ. 35/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի փողոց հ.15 շենքի հ.35/1 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Աննա Աթաբեկի Հարությունյանին և Անի Սամվելի Բազինյանին:

Անդրանիկի փողոցի հ.15 շենքի հ.35/1 բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 13.05.2025թ. հ.13052025-01-0219 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

Անդրանիկի փողոցի հ.15 շենքի հ.35 բնակարանը /նախկին հասցեն Ա-3 թաղամաս, 1 շենք, բն. 35/ ժողովրդական դեպուտատների Երևանի Շահումյանի շրջսովետի գործադիր կոմիտեի կողմից տրված 18.07.1981թ. հ.25725 օրդերի համաձայն՝ հատկացվել է Մելիք Զախարի Բոզինյանին և Սամվել Մելիքի Բազինյանին: 14.10.1981թ. Մելիք Բոզինյանը մահացել է և գործադիր կոմիտեի որոշման համաձայն բնակարանի վարձակալ է դարձել Սամվել Բազինյանը:

Սամվել Բազինյանը 1990թ. փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ է գտնվել Աննա Հարությունյանի հետ: 21.12.1990թ. ծնվել է նրանց դուստրը՝ Անին: Ընտանեկան հարաբերությունները չեն եղել հարթ, եղել են տարաձայնություններ, իսկ Սամվել Բազինյանը հաճախակի բացակայել է հանրապետությունից՝ մեկնելով արտագնա աշխատանքի: 1994թ. Աննա Հարությունյանը դիմել է դատարան՝ իրեն և դստերը Ա-3 թաղամաս հ. 1 շենքի 35 բնակարանում բնակեցնելու նպատակով: Դատարանը բավարարել է հայցը և Աննա Հարությունյանին իր երեխայի հետ հատկացրել է Ա-3 թաղամաս հ. 1 շենքի 35 բնակարանի 15,7 քմ բնակելի մակերեսով սենյակը, իսկ մյուս սենյակը թողնվել է Սամվել Բազինյանին: Բնակարանի կոմունալ և օժանդակ հարմարությունները թողնվել են կողմերի համատեղ օգտագործմանը:

Սամվել Բազինյանը հաճախակի է գտնվել Ռուսաստանի Դաշնությունում: Նրա բացակայության ընթացքում Անի Բազինյանը և Աննա Հարությունյանը տնօրինել, տիրապետել և օգտագործել են նրա գույքը ևս: Բոլոր կոմունալ վճարները կատարվել են նրանց կողմից: Ըստ կոմունալ քաղվածքների՝ Անդրանիկի փողոցի 15 շենքի 35 բնակարանի էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման բաժանորդն է հանդիսանում Աննա Հարությունյանը: Երկարատև բացակայության հիմքով դատարանի վճռով Սամվել Բազինյանը ճանաչվել է մահացած:

Շահումյանի շրջխորհրդի գործկոմի 23.11.1995թ. հ. 41/112 որոշմամբ Աննա Հարությունյանը սեփականաշնորհել է իրեն հատկացված սենյակը:

Ըստ «Գավառ» համատիրության կողմից տրված տեղեկանքի Անի Բազինյանը մոր՝ Աննա Հարությունյանի հետ միասին բնակվում են Անդրանիկի փողոց 15 շենքի 35 բնակարանում:

Ըստ անձնագրերի և վիզաների վարչության Մալաթիայի բաժանմունքի կողմից ներկայացված տեղեկանքի, Աննա Աթաբեկի Հարությունյանը (1994թ.) և Անի Սամվելի Բազինյանը (2007թ.) հաշվառված են Անդրանիկի փողոց հ. 15 շենքիր 35 բնակարանում:

ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ քաղաքացիներ Անի Բազինյանի և Աննա Հարությունյանի անվամբ ք. Երևան Անդրանիկի փողոց հ. 15 շենքի 35 բնակարան հասցեի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք, իսկ վերջին հինգ տարիների ընթացքում վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում կնքված անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ. 259-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ. 259-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ